



ՏԵՂԵԿԱՆՔ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ  
ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

# ՏԵՂԵԿԱՆՔ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ .....	1
2. ԲՅՈՒՋԵԻ ԵՎԱՄՈՒՏՆԵՐԸ.....	3
3. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ.....	6
3.1. Ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման.....	6
3.2. Ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման.....	9
3.3. Ծախսերը՝ ըստ ծրագրերի.....	11
4. ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ .....	13
ԱՄՓՈՓՈՒՄ.....	15

## 1. ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Երևան քաղաքի բյուջեի ցածր կատարողականը թե՛ եկամուտների, թե՛ ծախսերի մասով վերջին տարիներին, ցավոք, դարձել է «բնականոն» երևույթ: Իհարկե, կատարողականի չգոհացնող արդյունքները կարելի է բացատրել տարբեր գործոններով, սակայն դրանցից գլխավորը, ինչպես ցույց են տալիս վերլուծությունները, կառավարման համակարգի տարբեր օղակներում բավարար չափով որակյալ մասնագետների և կառավարիչների բացակայությունն է: Այդ պատճառով քաղաքի եկամուտների և ծախսերի պլանավորման, ինչպես նաև ժամանակին ու ողջ ծավալով դրանց կատարման գործընթացները տեղի են ունենում էական խեղումներով, ինչն էլ զգալիորեն ուշացնում է քաղաքի առջև ծառայած մարտահրավերների լուծումը՝ տրանսպորտային համակարգի արդիականացման ծրագրից մինչև քաղաքի ճարտարապետական տեսքի բարելավման և այլ խնդիրները: Այս համատեքստում, ուսումնասիրելով Երևան քաղաքի 2021թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը<sup>1</sup>, պարզ է դառնում, որ բյուջեի կատարողականը շարունակում է ուղեկցվել խնդրահարույց զարգացումներով (Աղյուսակ 1):

**Աղյուսակ 1. Երևան քաղաքի բյուջեի ամփոփ ցուցանիշները (մլն դրամ) և դրանց կատարողականը, 2021թ.<sup>2</sup>**

	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը հաստատված պլանի նկատմամբ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
<b>Եկամուտներ</b>	<b>92,420.3</b>	<b>85,801.8</b>	<b>81,729.6</b>	<b>88.4%</b>	<b>95.3%</b>
Վարչական բյուջե	90,832.2	84,493.7	80,667.8	88.8%	95.5%
Ֆոնդային բյուջե	3,787.0	1,434.8	1,061.8	28.0%	74.0%
<b>Ծախսեր</b>	<b>100,776.8</b>	<b>109,636.9</b>	<b>80,353.3</b>	<b>79.7%</b>	<b>73.3%</b>
Վարչական բյուջե	90,832.2	84,507.8	75,184.9	82.8%	89.0%
Ֆոնդային բյուջե	12,143.5	25,255.8	5,168.4	42.6%	20.5%
<b>Հավելուրդ (+) / Պակասուրդ (-)</b>	<b>-8,356.5</b>	<b>-23,835.1</b>	<b>1,376.4</b>	-	-

<sup>1</sup> Հաշվետվություն Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ, Երևանի քաղաքապետարան, 2022: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3L8Cax7>:

<sup>2</sup> Վարչական և ֆոնդային բյուջեների գումարն ավելի մեծ է, քան ընդամենը բյուջեինը, քանի որ ընդհանուր ծախսերը նվազեցվում են վարչական բյուջեի պահուստային ֆոնդից կատարված հատկացումների և ֆոնդային բյուջեի եկամուտ համարվող ակտիվների իրացումից ստացվող մուտքերի չափով: Անհրաժեշտ է նշել, որ եկամուտների ճշտված պլանի պարագայում վարչական և ֆոնդային բյուջեների գումարը գերազանցում է ընդհանուր ցուցանիշը 126.7 մլն դրամով: Սակայն սա որևէ ազդեցություն չունի բյուջետային հաշվեկշռի հաշվարկում, քանի որ ծախսերի ճշտված պլանի վարչական և ֆոնդային բյուջեների հանրագումարը շեղվում է ընդհանուր ցուցանիշից ճիշտ նույն մեծությամբ:

Այսպես, Երևան քաղաքի 2021թ. հաստատված բյուջեով նախատեսվել է հավաքագրել 92.4 մլրդ դրամ եկամուտ, սակայն տարվա ընթացքում բյուջեի եկամուտները 6.6 մլրդ դրամի չափով ճշգրտվել են նվազման ուղղությամբ և նույնիսկ այդ պայմաններում թերակատարվել են ևս 4.1 մլրդ դրամով՝ կազմելով 81.7 մլրդ դրամ: Արդյունքում եկամուտների կատարողականը բյուջեի հաստատված պլանի նկատմամբ կազմել է 88.4%, իսկ ճշտված պլանի նկատմամբ՝ 95.3%: Նշենք, որ 2020-ին եկամուտների կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմել էր 86.4%, և այս առումով 2021-ին 2020-ի համեմատ ցուցանիշի 8.9 տոկոսային կետով աճը հնարավոր կլիներ համարել բարելավում, եթե, իհարկե, հաստատված պլանից շեղումը չլիներ այդքան մեծ չափով (11.6% կամ 10.7 մլրդ դրամ): Նշենք նաև, որ 2021-ին եկամուտների վարչական մասի կատարողականը հաստատված և ճշտված պլանի նկատմամբ եղել է համեմատաբար ավելի բարձր (համապատասխանաբար 88.8% և 95.5%), քան ֆոնդային բյուջեինը, որի մասով կատարողականները կազմում են համապատասխանաբար 28.0% և 74.0%:


Բյուջեի ծախսերը 2021-ին հաստատված պլանով կազմել են 100.8 մլրդ դրամ, իսկ ճշտված պլանով՝ 109.6 մլրդ դրամ, այսինքն՝ բյուջեի ճշտված պլանով նախատեսվել է ծախսերի ավելացում 8.9 մլրդ դրամի չափով: Այդուհանդերձ, ճշտված պլանով նախատեսված ծախսերը թերակատարվել են 29.3 մլրդ դրամով, որի արդյունքում կատարողականը կազմել է 73.3%: Նշենք, որ 2020-ի համեմատ այս ցուցանիշը բարելավվել է 9.8 տոկոսային կետով, սակայն այն շարունակում է մտահոգիչ մնալ՝ արտացոլելով բյուջետային գործընթացներում ծախսերի պլանավորման, կազմակերպման և իրականացման մասով քաղաքային իշխանությունների կարողությունների ցածր մակարդակը: Այդ մասին է խոսում նաև այն փաստը, որ 2021-ին և՛ հաստատված պլանն է զգալիորեն թերակատարվել (20.4 մլրդ դրամի չափով), և՛ բյուջեի ճշտված պլանի կատարումը չի հաջողվել ապահովել: Նկատենք նաև, որ վարչական բյուջեի կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 89.0%, իսկ ֆոնդային բյուջեինը՝ ընդամենը 20.5%:

Եկամուտների 81.7 մլրդ դրամ և ծախսերի 80.4 մլրդ դրամ կատարողականի պայմաններում Երևան քաղաքի բյուջեն 2021-ին եղել է հավելուրդային՝ 1.4 մլրդ դրամի չափով: Այնինչ, ի սկզբանե նախատեսվում էր 8.4 մլրդ դրամի չափով պակասուրդային բյուջե, իսկ բյուջեի ճշտված պլանով՝ եկամուտների նվազեցման և ծախսերի ավելացման արդյունքում ակնկալվում էր տարին փակել 23.8 մլրդ դրամ պակասուրդով: Հավելուրդային բյուջեի ձևավորումը, իհարկե, եկամուտների համեմատ ծախսերի շատ ավելի ցածր կատարողականի հետևանք է և կրկին խոսում է բյուջետային գործընթացների անարդյունավետ կառավարման մասին:

## 2. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Երևան քաղաքի, ինչպես և ՀՀ մյուս համայնքների բյուջեների եկամտային մասը բաղկացած է երեք հիմնական հոդվածներից՝ *հարկեր և տուրքեր, պաշտոնական դրամաշնորհներ և այլ եկամուտներ*: Ինչպես ցույց է տրված Գծապատկեր 1-ում, Երևանի բյուջեի հաստատված պլանով նախատեսվում էր հավաքագրել հարկեր և տուրքեր 22.2 մլրդ դրամի չափով (կշիռն ընդհանուր եկամուտներում՝ 24.1%), ստանալ պաշտոնական դրամաշնորհներ 25.7 մլրդ դրամի չափով (եկամուտների 27.8%-ը), և այլ եկամուտներ՝ 44.5 մլրդ դրամի չափով (եկամուտների 48.1%-ը): Նկատենք, սակայն, որ տարվա ընթացքում նվազման ուղղությամբ են ճշգրտվել ինչպես պաշտոնական դրամաշնորհների, այնպես էլ բյուջեի այլ եկամուտների հոդվածները (համապատասխանաբար 1.9 մլրդ և 4.7 մլրդ դրամի չափով), ինչի արդյունքում այլ եկամուտների հարաբերական ծավալները ևս փոփոխվել են: Փաստացի արդյունքներով թերակատարումներ են գրանցվել բոլոր երեք ուղղություններով: Հարկերը և տուրքերը հաստատված և ճշտված պլանների նկատմամբ թերակատարվել են 0.8 մլրդ դրամով (կազմել են 21.4 մլրդ դրամ կամ ընդհանուրի 26.2%-ը), պաշտոնական դրամաշնորհները՝ համապատասխանաբար 4.2 մլրդ և 2.3 մլրդ դրամով (կազմել են 21.5 մլրդ դրամ կամ ընդհանուրի 26.3%-ը), իսկ այլ եկամուտները՝ 5.7 մլրդ և 1.0 մլրդ դրամով (կազմել են 38.8 մլրդ դրամ կամ ընդհանուրի 47.5%-ը):

**Գծապատկեր 1. Երևան քաղաքի բյուջեի եկամուտների բացարձակ (մլրդ դրամ, ձախ հատված) և հարաբերական (% աջ հատված) ծավալները, 2021թ.**



Աղյուսակ 2-ը հուշում է, որ եկամուտների՝ ճշտված պլանի նկատմամբ 95.3% կատարողականի պայմաններում արձանագրված 4.7% թերակատարման 2.7

տոկոսային կետը բացատրվում է պաշտոնական դրամաշնորհների 9.6%, 1.2 տոկոսային կետը՝ այլ եկամուտների 2.5%, և 0.9 տոկոսային կետը՝ հարկերի ու տուրքերի 3.6%-ով թերակատարումներով:

**Աղյուսակ 2. Երևան քաղաքի բյուջեի եկամուտները (մլն դրամ) և դրանց կատարողականը, 2021թ.**

Եկամտային հոդվածները	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը հաստատված պլանի նկատմամբ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
<b>Ընդամենը եկամուտներ</b>	<b>92,420.3</b>	<b>85,801.8</b>	<b>81,729.6</b>	<b>88.4%</b>	<b>95.3%</b>
<b>Հարկեր և տուրքեր</b>	<b>22,232.3</b>	<b>22,232.3</b>	<b>21,424.2</b>	<b>96.4%</b>	<b>96.4%</b>
Գույքային հարկեր անշարժ գույքից	6,475.6	6,475.6	7,167.0	110.7%	110.7%
Գույքային հարկեր այլ գույքից	12,115.1	12,115.1	10,283.5	84.9%	84.9%
Տեղական տուրքեր	3,184.6	3,184.6	3,378.8	106.1%	106.1%
Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր	457.0	457.0	594.9	130.2%	130.2%
<b>Պաշտոնական դրամաշնորհներ</b>	<b>25,711.0</b>	<b>23,809.9</b>	<b>21,533.9</b>	<b>83.8%</b>	<b>90.4%</b>
Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	2,245.9	2,245.9	242.3	10.8%	10.8%
Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	21,904.0	20,282.8	20,279.1	92.6%	99.98%
Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	961.1	961.1	714.7	74.4%	74.4%
Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	600.0	320.0	297.8	49.6%	93.1%
<b>Այլ եկամուտներ</b>	<b>44,477.0</b>	<b>39,759.6</b>	<b>38,771.5</b>	<b>87.2%</b>	<b>97.5%</b>
Շահաբաժիններից	121.4	121.4	102.5	84.4%	84.4%
Գույքի վարձակալությունից	1,139.2	1,139.2	1,261.2	110.7%	110.7%
Ապրանքների մարակարարումից և ծառայությունների մատուցումից	36,015.5	31,297.6	29,617.3	82.2%	94.6%
Պարավիրակված լիազորություններ	36,015.5	31,297.6	29,584.4	82.1%	94.5%
Այլ	0.0	0.0	32.9	-	-
Վարչական գանձումներ	5,926.3	5,926.8	6,439.7	108.7%	108.7%
Տույժեր, սուղանքներ	500.1	500.1	748.7	149.7%	149.7%
Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	0.000	0.000	12.665	-	-
Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	12.000	12.000	3.100	25.8%	25.8%
Այլ եկամուտներ	747.5	747.5	540.2	72.3%	72.3%

Եկամտային հոդվածների ավելի խոր բացվածքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանց 4.7% թերակատարման վրա առավել խոշոր բացասական ազդեցությունները գրանցվել են 3 ուղղություններով:

Առաջինը միջազգային կազմակերպություններից *ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհների* թերակատարումն է 89.2%-ով, որի նպաստումն ընդհանուր եկամուտների թերակատարմանը կազմել է 2.3 տոկոսային կետ: Ընդ որում, Ադյուսակ 2-ից պարզ է դառնում, որ տարվա ընթացքում այս մասով ճշգրտումներ տեղի չեն ունեցել և ակնկալվում էր ստանալ 2,245.9 մլն դրամի չափով դրամաշնորհներ, սակայն դրանց ստացման համար անհրաժեշտ պայմանների չկատարման հետևանքով ստացվել է ընդամենը նշված գումարի 10.8%-ը՝ 242.3 մլն դրամ:

Երկրորդը *տրանսպորտային միջոցներից գույքահարկի գծով* (գույքային հարկեր այլ գույքից) եկամուտների 15.1%-ով թերակատարումն է, որն ընդհանուր եկամուտների թերակատարմանը նպաստել է 2.1 տոկոսային կետով: Ընդ որում, 2020-ի համեմատ 2021-ին այս հարկատեսակից գեներացվող եկամուտների մասով բյուջեի հաստատված պլանով նախատեսվում էր ապահովել եկամուտների աճ 35.2%-ի չափով, ինչը քաղաքային իշխանությունները պայմանավորում էին հարկման բազայի (տրանսպորտային միջոցների քանակի) աճով: Մեր կողմից իրականացված վերլուծության մեջ նշվել էր, որ տրանսպորտային միջոցների կտրուկ աճն ամբողջությամբ հարկման բազա չի դառնալու, քանի որ դրանց զգալի մասը արտահանվել է, սակայն գրանցումից չի հանվել<sup>3</sup>: Այս հանգամանքը, ցավոք, հաշվի չէր առնվել քաղաքային իշխանությունների կողմից, և փոխադրամիջոցներից ստացվող գույքահարկի մասով վերանայումներ չէին իրականացվել նույնիսկ բյուջեի ճշտված պլանում, ինչն ավելի ռիսկային էր դարձնում գույքահարկի թերակատարման դեպքում այդ եկամուտների շրջանակում ծախսերի նախատեսումը և իրականացումը: Արդյունքում պլանավորված 12,115.1 մլն դրամի փոխարեն այս մասով հավաքագրվել է 10,283.5 մլն դրամ կամ 1,831.6 մլն դրամի չափով պակաս եկամուտ՝ զգալիորեն նվազեցնելով բյուջետային ծրագրերի իրագործման հնարավորությունները:

Երրորդը պետության կողմից քաղաքային իշխանություններին *պարվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից փոխանցվող միջոցներն* են (բյուջեի ընդհանուր եկամուտների մոտ մեկ երրորդը), որոնք թերակատարվել են 5.5%-ով և եկամուտների 4.7% թերակատարմանը նպաստել 2.0 տոկոսային կետով: Այս մասով պետք է նշել մտահոգիչ երկու հանգամանք: Առաջին հերթին, Երևանի 2021թ. բյուջեի հաստատված պլանով արդեն իսկ << պետական բյուջեից նշված հոդվածով փոխանցվող գումարները նախորդ տարվա նախատեսվածի համեմատ

<sup>3</sup> Ամփոփ վերլուծություն Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի վերաբերյալ, «Լույս» հիմնադրամ, 2020, էջ 2: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/36oKERp>:

նվազեցվել էին 35.8%-ով<sup>4</sup> կամ 20,095.7 մլն դրամի չափով: Երկրորդ, տարվա ընթացքում բյուջեի ճշգրտման ընթացքում այս գումարները կրկին նվազեցվել են՝ այս անգամ 4,717.9 մլն դրամով կամ 13.1%-ով: Ուստի, պատվիրակված լիազորությունների շրջանակում պետական բյուջեից փոխանցվող գումարների 5.5%-ով թերակատարումն իրականում շատ ավելի անհանգստացնող պատկեր ունի և խոսում է 2021 թվականին ՀՀ կառավարության հետ քաղաքային իշխանությունների համատեղ աշխատանքի անարդյունավետության մասին:


### 3. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

Վերլուծության այս մասում կներկայացնենք Երևան քաղաքի 2021թ. բյուջեի ծախսերի կատարողականը՝ ըստ տնտեսագիտական, գործառնական և ծրագրային դասակարգման:

#### 3.1. Ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման

Ըստ տնտեսագիտական դասակարգման՝ Երևան քաղաքի բյուջեի ծախսային հոդվածներն են՝ *ընթացիկ ծախսերը*, *ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը* և *ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը*:

**Գծապատկեր 2. Երևան քաղաքի բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ տնտեսագիտական դասակարգմամբ (մլրդ դրամ), 2021թ.**




<sup>4</sup> Նույն տեղում, էջ 3:



Ինչպես պարզ է դառնում Գծապատկեր 2-ից, բյուջեի հաստատված պլանով նախատեսված 100.8 մլրդ դրամ ծախսից 88.9 մլրդ դրամը կազմել են ընթացիկ ծախսերը, իսկ 16.5 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը: Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից նախատեսվել է ստանալ 4.5 մլրդ դրամի չափով մուտքեր: Բյուջեի ճշտված պլանով, սակայն, ընթացիկ ծախսերը նվազեցվել են 4.4 մլրդ դրամով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ավելացվել են 13.2 մլրդ դրամով, ինչի արդյունքում ընդհանուր ծախսերն աճել են 8.8 մլրդ դրամի չափով:

Նախքան ծախսերի կատարողականին անդրադառնալը, նկատենք, որ Երևան քաղաքի 2021թ. բյուջեի փաստացի արդյունքներով ընթացիկ ծախսերի 56.2%-ը բաժին է ընկել սուբսիդիաներին, 18.5%-ը՝ այլ ծախսերին, 13.1%-ը՝ աշխատանքի վարձատրությանը, 10.1%-ը՝ ծառայությունների և ապրանքների ձեռքբերմանը, 1.4%-ը՝ սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, իսկ 0.7%-ը՝ դրամաշնորհներին (Գծապատկեր 3):

**Գծապատկեր 3. Երևան քաղաքի բյուջեի ընթացիկ ծախսերի կառուցվածքը %, 2021թ.**



Վերադառնալով ծախսերի կատարողականին՝ նշենք, որ 2021թ. փաստացի ցուցանիշներով, բյուջեի ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են ինչպես ընթացիկ, այնպես էլ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը՝ համապատասխանաբար 9.2 և 6.2 մլրդ դրամով՝ կազմելով 75.3 մլրդ և 23.5 մլրդ դրամ: Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը, հակառակը, գերակատարվել են շուրջ 3 անգամ՝ կազմելով 18.5 մլրդ դրամ: Արդյունքում զուտ

ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնությունների ցուցանիշը փաստացի շատ փոքր է և կազմում է 5.0 մլրդ դրամ՝ ավելի քան 2 անգամ զիջելով բյուջեով հաստատված պլանով և 5 անգամ՝ ճշտված պլանով սահմանված համապատասխան ցուցանիշին:

Աղյուսակ 3-ը հուշում է, որ ընդհանուր ծախսերի՝ բյուջեի ճշտված պլանի նկատմամբ 73.3% կատարողականի պայմաններում ծախսերի թերակատարումը կազմել է 26.7%, որից 8.4 տոկոսային կետը բացատրվում է ընթացիկ ծախսերի 10.9% թերակատարմամբ, 5.6 տոկոսային կետը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի 20.6% թերակատարմամբ, իսկ 12.7 տոկոսային կետը՝ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից ստացվող մուտքերի ավելի քան 3 անգամ գերակատարմամբ:

**Աղյուսակ 3. Երևան քաղաքի բյուջեի ծախսերը՝ տնտեսագիտական դասակարգմամբ (մլն դրամ) և դրանց կատարողականը, 2021թ.**

Ծախսային հոդվածները	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը հաստատված պլանի նկատմամբ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
<b>Ընդամենը ծախսեր</b>	<b>100,776.8</b>	<b>109,636.9</b>	<b>80,353.3</b>	<b>79.7%</b>	<b>73.3%</b>
<b>Ընթացիկ ծախսեր</b>	<b>88,851.3</b>	<b>84,524.2</b>	<b>75,292.5</b>	<b>84.7%</b>	<b>89.1%</b>
<i>Աշխատանքի վարձատրություն</i>	9,512.5	10,122.4	9,895.7	104.0%	97.8%
<i>Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում</i>	12,507.8	9,030.7	7,569.0	60.5%	83.8%
<i>Սուբսիդիաներ</i>	42,888.1	43,148.8	42,296.9	98.6%	98.0%
<i>Դրամաշնորհներ</i>	439.1	546.4	525.4	119.6%	96.1%
<i>Սոց. նպաստներ և կենսաթոշակներ</i>	2,347.1	1,108.6	1,075.1	45.8%	97.0%
<i>Այլ ծախսեր</i>	21,156.7	20,563.1	13,927.3	65.8%	67.7%
<b>Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր</b>	<b>16,466.5</b>	<b>29,653.8</b>	<b>23,531.6</b>	<b>142.9%</b>	<b>79.4%</b>
<i>Հիմնական միջոցներ</i>	16,458.1	29,645.4	23,531.6	143.0%	79.4%
<i>Պաշարներ</i>	8.4	8.4	0.0	-	-
<b>Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր</b>	<b>-4,541.0</b>	<b>-4,541.0</b>	<b>-18,470.8</b>	<b>406.8%</b>	<b>406.8%</b>
<i>Հիմնական միջոցներ</i>	-541.0	-541.0	-539.2	99.7%	99.7%
<i>Չարտադրված ակտիվներ</i>	-4,000.0	-4,000.0	-17,931.6	448.3%	448.3%

Ընթացիկ ծախսերի 10.9% թերակատարմանն ամենամեծ նպաստումն ունեցել է այլ ծախսերի թերակատարումը 32.3%-ով (7.9 տոկոսային կետ), որին հաջորդում է ծառայությունների, ապրանքների ձեռքբերման ծախսերի 16.2%-ով


թերակատարումը (1.7 տոկոսային կետ) և սուբսիդիաների 2.0%-ով թերակատարումը (1.0 տոկոսային կետ):

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի մասով նշենք, որ դրանց նկատելի թերակատարումը (20.6%) շարունակում է մնալ քաղաքային իշխանությունների՝ ծախսերի կատարման ցածր կարողությունների ցուցիչ, թեև պետք է նկատենք, որ այս անգամ, ի տարբերություն վերջին տարիների, դրանց թերակատարման մակարդակը նվազել է (2018-ին այն կազմում էր 62.3%, 2019-ին՝ 52.4%, իսկ 2020-ին՝ 59.9%): Այդուհանդերձ, կրկին պետք է արձանագրել, որ 20.6%-ով թերակատարումը բավական մտահոգիչ է, քանի որ այս ծախսերն ուղղվում են քաղաքային ենթակառուցվածքների զարգացմանն ու նորերի կառուցմանը, իսկ դրանց չիրականացումը հանգեցնում է Երևան քաղաքի՝ երկրում որպես տնտեսական կարևորագույն հանգույցի, դիրքերի թուլացմանը և որպես հետևանք նաև նպաստում է ողջ տնտեսության աճի հնարավորությունների տուգանմանը: Մյուս կողմից, այս ծախսերի չիրականացման բացասական հետևանքներն իրենց վրա են զգում քաղաքացիները՝ կյանքի որակի և բարեկեցության մակարդակի վատթարացման առումով:

### 3.2. Ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման

Երևան քաղաքի բյուջեի ծախսային հոդվածները գործառնական դասակարգմամբ դիտարկելիս ներկայացնենք դրանք հետևյալ խմբավորումներով՝ *տնտեսական ծառայություններ* (ներառում է տնտեսական հարաբերությունների և շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտները), *սոցիալական ծառայություններ* (ներառում է սոցիալական պաշտպանության, առողջապահության, բնակարանաշինության, հանգստի, մշակույթի և կրոնի ոլորտները), *ընդհանուր նշանակության պետական ծառայություններ* (ներառում է ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների և պաշտպանության ոլորտները), *կրթություն*, և *պահուստային ֆոնդեր* (Գծապատկեր 4):

**Գծապատկեր 4. Երևան քաղաքի բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ գործառնական դասակարգմամբ (մլրդ դրամ), 2021թ.**



Գծապատկեր 4-ը հուշում է, որ բյուջեի ծախսերի հաստատված պլանի համեմատ ճշտված պլանում աճի ուղղությամբ զգալի ճշգրտումներ են կատարվել տնտեսական ծառայությունների մասով (8.7 մլրդ դրամի չափով), իսկ նվազման ուղղությամբ՝ սոցիալական ծառայությունների մասով (1.3 մլրդ դրամի չափով): Ընդհանուր նշանակության պետական ծառայություններին ուղղվող ծախսերն ավելացվել են 0.9 մլրդ դրամով, իսկ կրթության ծախսերը նվազեցվել են 0.5 մլրդ դրամով:

2021թ. փաստացի արդյունքներով ընդհանուր ծախսերը թերակատարվել են բոլոր ուղղություններով (ինչպես արդեն նշել ենք՝ 26.7%-ով): Ընդ որում, նկատելի է տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերի ճշտված պլանի և փաստացի ցուցանիշների ճեղքվածքը՝ 22.4 մլրդ դրամ (նպաստումը ընդհանուր ծախսերի թերակատարմանը՝ 20.4 տոկոսային կետ), ինչպես նաև սոցիալական ծառայություններինը՝ 3.7 մլրդ դրամ (նպաստումը՝ 3.4 տոկոսային կետ): Կրթությանն ուղղվող, ինչպես նաև ընդհանուր նշանակության պետական ծառայությունների ծախսերը ևս թերակատարվել են՝ համապատասխանաբար 1.4 մլրդ և 1.1 մլրդ դրամի չափով (նպաստումները՝ համապատասխանաբար 1.3 և 1.0 տոկոսային կետ):

**Աղյուսակ 4. Երևան քաղաքի բյուջեի ծախսերը՝ գործառնական դասակարգմամբ (մլն դրամ) և դրանց կատարողականը (%), 2021թ.**

Ծախսային հոդվածները	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը հաստատված պլանի նկատմամբ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
<b>Ընդամենը ծախսեր</b>	<b>100,776.8</b>	<b>109,636.9</b>	<b>80,353.3</b>	<b>79.7%</b>	<b>73.3%</b>
<b>Ընդհանուր նշ. պետ. ծառ.</b>	<b>9,193.3</b>	<b>10,131.4</b>	<b>9,075.4</b>	<b>98.7%</b>	<b>89.6%</b>
<i>Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ</i>	<i>9,130.7</i>	<i>10,048.4</i>	<i>9,033.0</i>	<i>98.9%</i>	<i>89.9%</i>
<i>Պաշտպանություն</i>	<i>62.6</i>	<i>83.0</i>	<i>42.4</i>	<i>67.7%</i>	<i>51.1%</i>
<b>Տնտեսական ծառայություններ</b>	<b>35,829.7</b>	<b>44,542.6</b>	<b>22,170.7</b>	<b>61.9%</b>	<b>49.8%</b>
<i>Տնտեսական հարաբերություններ</i>	<i>18,382.5</i>	<i>31,074.4</i>	<i>11,777.7</i>	<i>64.1%</i>	<i>37.9%</i>
<i>Շրջակա միջավայրի պաշտպանություն</i>	<i>17,447.2</i>	<i>13,468.2</i>	<i>10,393.0</i>	<i>59.6%</i>	<i>77.2%</i>
<b>Սոցիալական ծառայություններ</b>	<b>14,950.9</b>	<b>13,669.5</b>	<b>9,949.2</b>	<b>66.5%</b>	<b>72.8%</b>
<i>Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ</i>	<i>7,912.0</i>	<i>7,197.0</i>	<i>4,838.1</i>	<i>61.1%</i>	<i>67.2%</i>
<i>Առողջապահություն</i>	<i>464.8</i>	<i>483.8</i>	<i>317.8</i>	<i>68.4%</i>	<i>65.7%</i>
<i>Հանգիստ, մշակույթ և կրոն</i>	<i>4,221.5</i>	<i>4,330.3</i>	<i>3,567.4</i>	<i>84.5%</i>	<i>82.4%</i>
<i>Սոցիալական պաշտպանություն</i>	<i>2,352.6</i>	<i>1,658.4</i>	<i>1,226.0</i>	<i>52.1%</i>	<i>73.9%</i>
<b>Կրթություն</b>	<b>33,372.3</b>	<b>32,917.3</b>	<b>31,525.9</b>	<b>94.5%</b>	<b>95.8%</b>
<b>Պահուստային ֆոնդեր</b>	<b>7,430.6</b>	<b>8,376.1</b>	<b>7,632.1</b>	<b>102.7%</b>	<b>91.1%</b>

Աղյուսակ 4-ից կարելի է նկատել, որ առանձին ծախսային հոդվածների մասով ընդհանուր ծախսերի թերակատարմանը զգալիորեն նպաստել են տնտեսական հարաբերություններին ուղղվող ծախսերի 62.1%-ով թերակատարումը (նպաստումը՝ 17.6 տոկոսային կետ), շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերի 22.8%-ով թերակատարումը (նպաստումը՝ 2.8 տոկոսային կետ) և բնակարանային շինարարության ու կոմունալ ծառայություններին ուղղվող ծախսերի 32.8%-ով թերակատարումը (նպաստումը՝ 2.2 տոկոսային կետ): Ընդ որում, պետք է նշել, որ հատկապես մտահոգիչ է տնտեսական հարաբերությունների հոդվածով ճանապարհային տրանսպորտին ուղղվող ծախսերի թերակատարումը 13.7%-ով կամ 3.3 մլրդ դրամի չափով, ինչը տեղի է ունենում քաղաքային իշխանությունների՝ ճանապարհային տրանսպորտային ցանցի բարելավման խոստումների պայմաններում և համահունչ չէ սահմանված նպատակներին: Նշենք, որ այս ծախսերը զգալիորեն թերակատարվել են նաև նախորդ տարիներին:

**3.3. Ծախսերը՝ ըստ ծրագրերի**

«Լույս» հիմնադրամի կողմից Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի՝ ըստ ծրագրերի դասակարգված ծախսերի նախորդ ուսումնասիրությունը (հաստատված բյուջեի մասով) ցույց է տվել, որ ընդհանուր ծախսերի նվազումը մեծ ազդեցություն

է ունեցել քաղաքի զարգացման տեսանկյունից «կարևոր» ծախսերի ծավալների վրա, որոնք զգալի չափով ևս նվազեցվել են<sup>5</sup>: Ուսումնասիրելով Երևանի 2021թ. բյուջեի փաստացի ծախսերի կատարողականը՝ ըստ ծրագրային դասակարգման, նկատենք, որ քաղաքային ենթակառուցվածքների բարելավման և զարգացման համար կարևոր ծրագրերից շատերը, բացի նվազեցվելուց, նաև զգալիորեն թերակատարվել են, ինչը ևս մտահոգվելու առիթ է հանդիսանում:

Աղյուսակ 5-ից պարզ է դառնում, որ բավական ցածր կատարողականներ են գրանցվել այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են *շենքերի և շինությունների բարելավումը* (վերելակների, վթարային պատշգամբների և հենապատերի նորոգում), *քաղաքի արտաքին տեսքի բարելավումը* (փողոցների, հրապարակների, այգիների, բակային տարածքների, խաղահրապարակների կահավորումից ու վերանորոգումից մինչև հետիոտնային անցումների ու թեքահարթակների կառուցում և պահպանում), *շրջակա միջավայրի պահպանումը* (շրջակա միջավայրի պաշտպանության ենթակառուցվածքների զարգացումից մինչև կոշտ և վտանգավոր թափոնների կառավարում), *քաղաքային առողջապահության զարգացումը* (բժշկական սարքավորումների ձեռքբերում, առողջապահական օբյեկտների հիմնանորոգում) և *կրթական համակարգի զարգացումը*:

---

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 7:

**Աղյուսակ 5. Երևան քաղաքի 2021թ. բյուջեի մի շարք կարևոր ծրագրերի կատարողական ցուցանիշները, մլն դրամ**

Անվանումը	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
Վերելակների հիմնանորոգում	3,251.4	2,748.1	84.5%
Վթարային պարզգամբների նորոգում	78.2	22.0	28.2%
Հենապատերի վերանորոգում	184.2	92.0	49.9%
Զբոսաշրջության զարգացում	23.1	14.8	64.2%
Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում	446.2	107.2	24.0%
Հանգստի գոյիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում	912.1	567.1	62.2%
Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում	1,631.1	1,044.9	64.1%
Հեղիուրն անցումների կառուցում և վերանորոգում	74.4	28.1	37.7%
Թեքահարթակների կառուցում	23.7	4.9	20.7%
Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում	44.2	6.4	14.5%
Շրջակա միջավայրի պաշտպանության ենթակառուցվածքների զարգացում	409.9	6.0	1.5%
Երևանի արևային համայնքի զարգացում	649.4	125.8	19.4%
Կոշտ թափոնների կառավարում	55.9	4.7	8.4%
Վրանգավոր թափոնների կառավարում	2,526.3	324.8	12.9%
Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռքբերում	222.3	133.3	59.9%
Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում	250.0	176.8	70.7%
Նախարարոցական ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում	160.0	76.3	47.7%

**4. ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ**

2021թ. Երևան քաղաքի բյուջեն կատարվել է 1.4 մլրդ դրամ հավելուրդով՝ ճշտված պլանով նախատեսված 23.8 մլրդ դրամ պակասուրդի դիմաց (Աղյուսակ 6): Համեմատության համար նշենք, որ 2020-ին ևս ձևավորվել էր հավելուրդ՝ 9.1 մլրդ դրամի չափով՝ հակառակ պլանավորված պակասուրդային բյուջեի: Երկու դեպքում էլ հավելուրդային բյուջեի ձևավորումը եկամուտների համեմատ ծախսերի անհամեմատ ցածր կատարողականի արդյունք է եղել: 2021-ին հավելուրդի չափը

բացարձակ ծավալով ավելի փոքր է, քան 2020-ին, սակայն բյուջեի կատարման արդյունավետության տեսանկյունից, իրականում, դրական տեղաշարժն այս մասով գրեթե աննշան է: Բանն այն է, որ 2021-ին փաստացի ցուցանիշի շեղումը ճշտված պլանից կազմել է 25.2 մլրդ դրամ, իսկ 2020-ին այն 25.5 մլրդ դրամ էր:


Աղյուսակ 6-ից նկատենք, որ ճշտված պլանով նախատեսվում էր պակասուրդի գոյացում ինչպես վարչական բյուջեի մասով (14.1 մլն դրամ), այնպես էլ ֆոնդային բյուջեի մասով (23,821.0 մլն դրամ): Այդուհանդերձ, վարչական բյուջեով ձևավորվել է հավելուրդ շուրջ 5,482.9 մլն դրամի չափով, իսկ ֆոնդային բյուջեով ձևավորվել է պակասուրդ նախատեսվածից շուրջ 6 անգամ փոքր՝ 4,106.6 մլն դրամի չափով:

**Աղյուսակ 6. Երևան քաղաքի բյուջեի հավելուրդը (պակասուրդը) (մլն դրամ) և դրա կատարողականը, 2020թ.**

	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը հաստատված պլանի նկատմամբ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
<b>Եկամուտներ</b>	<b>92,420.3</b>	<b>85,801.8</b>	<b>81,729.6</b>	<b>88.4%</b>	<b>95.3%</b>
<b>Ծախսեր</b>	<b>100,776.8</b>	<b>109,636.9</b>	<b>80,353.3</b>	<b>79.7%</b>	<b>73.3%</b>
<b>Հավելուրդ (+) / Պակասուրդ (-)</b>	<b>-8,356.5</b>	<b>-23,835.1</b>	<b>1,376.4</b>	-	-
<i>Վարչական բյուջե</i>	<i>0.0</i>	<i>-14.1</i>	<i>5,482.9</i>	-	-
<i>Ֆոնդային բյուջե</i>	<i>-8,356.5</i>	<i>-23,821.0</i>	<i>-4,106.6</i>	-	-

Նշենք նաև, որ 2021 թվականի ճշտված բյուջեով նախատեսվում էր ծրագրված 23.8 մլրդ դրամ պակասուրդի 96.0%-ը (22.9 մլրդ դրամ) ֆինանսավորել ֆինանսական ակտիվների հաշվին (հիմնականում՝ բյուջեի տարեսկզբի ազատ միջոցներով), իսկ 4.0%-ը՝ մոտ 1.0 մլրդ դրամը՝ փոխառու միջոցների (վարկերի) հաշվին (Գծապատկեր 5): Սակայն, փաստացի արդյունքներով ֆինանսական ակտիվների միջոցներն ուղղվել են հավելուրդի ֆինանսավորմանը:

**Գծապատկեր 5. Երևան քաղաքի բյուջեի հավելուրդը (պակասուրդը) և դրա ֆինանսավորման աղբյուրները (մլրդ դրամ), 2021թ.**





## ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով Երևան քաղաքի 2021թ. բյուջեի կատարողականի վերաբերյալ վերլուծությունը՝ կարող ենք արձանագրել.

- Բյուջեի սուղ ֆինանսական միջոցների առկայության պայմաններում բյուջետային գործընթացների պլանավորումն ու կազմակերպումը շարունակում է իրականացվել էական շեղումներով, որոնք գլխավորապես արտացոլում են քաղաքային իշխանությունների մարդկային ռեսուրսների խնդիրները՝ անհրաժեշտ թվով որակավորված մասնագետների և կառավարիչների բացակայության մասով:
- Այդ շեղումների մի մասն արտահայտվում է հատկապես այնպիսի ծախսային հոդվածների ցածր կատարողականներում, որոնք կառավարիչներից պահանջում են լրացուցիչ ջանք և հմտություններ՝ ինչպես գնումների գործընթացի արդյունավետ կազմակերպման, այնպես էլ գործընթացների վերահսկման և ծրագրերն ամբողջությամբ ու ժամանակին կատարելու համատեքստում:
- Շեղումների մյուս՝ համեմատաբար ավելի փոքր մասն արտահայտվում է բյուջեի եկամուտների պլանավորման և հավաքագրման գործընթացներում, երբ տարվա ընթացքում քաղաքային իշխանությունները ստիպված են լինում եկամուտները ճշգրտել նվազման ուղղությամբ, և նույնիսկ այդ պայմաններում հավաքագրված եկամուտները թերակատարվում են:
- Երևան քաղաքի 2021թ. բյուջեի եկամուտների փաստացի ցուցանիշը կազմել է 81.7 մլրդ դրամ, ինչի պայմաններում բյուջեի հաստատված պլանի նկատմամբ թերակատարումը կազմել է 10.7 մլրդ դրամ (11.6%), իսկ ճշտված պլանի նկատմամբ՝ 4.1 մլրդ դրամ (4.7%):
- Բյուջեի ճշտված պլանի նկատմամբ եկամուտների թերակատարման հիմնական խնդիրները գրանցվել են երեք ուղղությամբ՝ *ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհների* թերակատարում (89.2%-ով կամ 2.0 մլրդ դրամի չափով), *տրանսպորտային միջոցներից գույքահարկի գծով եկամուտների* թերակատարում (15.1%-ով կամ 1.8 մլրդ դրամի չափով), պետության կողմից քաղաքային իշխանություններին *պատվիրակված լիազորությունների շրջանակներում տրամադրվող պետական բյուջեի գումարների* թերփոխանցումներ (5.5%-ով կամ 1.7 մլրդ դրամի չափով):
- Երևան քաղաքի 2021թ. բյուջեի ծախսերի փաստացի ցուցանիշը կազմել է 80.4 մլրդ դրամ, ինչի պայմաններում բյուջեի հաստատված պլանի նկատմամբ թերակատարումը կազմել է 20.4 մլրդ դրամ (20.3%), իսկ ճշտված պլանի նկատմամբ՝ 29.2 մլրդ դրամ (26.7%):

- Բյուջեի ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են ինչպես ընթացիկ, այնպես էլ ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ բնույթի) ծախսերը՝ համապատասխանաբար 9.2 մլրդ դրամով (10.9%) և 6.2 մլրդ դրամով (20.6%)՝ կազմելով 75.3 մլրդ և 23.5 մլրդ դրամ:
- Կապիտալ բնույթի ծախսերի նկատելի թերակատարումը շարունակում է մնալ քաղաքային իշխանությունների կողմից Երևանի զարգացմանը նպաստող ծախսերը կատարելու ցածր կարողությունների ցուցիչ, ինչն իր բացասական հետևանքներն է թողնում ինչպես քաղաքի տնտեսական հզորությունների թուլացման, այնպես էլ քաղաքացիների կյանքի որակի և բարեկեցության մակարդակի վատթարացման առումով:
- Մտահոգիչ է նաև ճանապարհային տրանսպորտին ուղղվող ծախսերի թերակատարումը 13.7%-ով կամ 3.3 մլրդ դրամի չափով, ինչը համահունչ չէ տրանսպորտային ցանցի բարելավման խոստումներին և սահմանված նպատակներին: Ընդ որում, այս ծախսերը զգալիորեն թերակատարվել են նաև նախորդ տարիներին:
- Ծախսերի կատարողականը՝ ըստ իրականացված ծրագրերի դիտարկելիս ևս որոշ մտահոգություններ են առաջանում: Մասնավորապես, քաղաքային ենթակառուցվածքների բարելավման և զարգացման համար անհրաժեշտ մի շարք ծրագրերի մասով մի կողմից՝ 2021-ին 2020-ի համեմատ ի սկզբանե պլանավորվել են ավելի փոքր ծավալով ծախսեր (թեև այդ ծախսերի կատարման անհրաժեշտությունը շարունակում է մնալ արդիական), մյուս կողմից՝ դրանք էականորեն թերակատարվել են (ընդհուպ մինչև 80-90%-ով): Այդպիսի ծախսերի շարքին են դասվում շենքերի և շինությունների, քաղաքի արտաքին տեսքի բարելավմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, քաղաքային առողջապահության և կրթական համակարգերի զարգացմանն ուղղվող ծրագրերի գծով ծախսերը:
- Եկամուտների համեմատ ծախսերի շատ ավելի ցածր կատարողականի հետևանքով Երևան քաղաքի 2021թ. բյուջեի եկամուտների մակարդակը (81.7 մլրդ դրամ) գերազանցել է ծախսերի մակարդակին (80.4 մլրդ դրամ), ինչի պատճառով ձևավորվել է հավելուրդային բյուջե՝ 1.4 մլրդ դրամի չափով: Այնինչ, բյուջեի ճշտված պլանով ակնկալվում էր տարին փակել 23.8 մլրդ դրամ պակասուրդով:
- Պլանավորված պակասուրդային բյուջեի փոխարեն հավելուրդային բյուջեի ձևավորումը, որը տեղի է ունենում ոչ թե բյուջեի միջոցների խելամիտ կառավարման և արդյունավետ տնտեսումների արդյունքում, այլ պարզապես ծախսերը ժամանակին և ամբողջությամբ կատարելու անկարողության պայմաններում, ներկայիս քաղաքային իշխանությունների լրջագույն

Խնդիրներից է և կրկին փաստում է բյուջետային գործընթացների  
անարդյունավետ կառավարման մասին:

---

**«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:**

**Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**